ի բաժնին Աթըպատականի՝ հանդէպ Նախիջեւանայ գաւառի, ուր եւ նորագեղի գտանիսն վանից քար ու կրով, որպէս վկայէ արձանագիրն, որ ի զանգակատան նորին՝ տրօք բարեպաշտ ազուլեցի ազգայնոց՝ օժանդակութեամբ մեծապատիւ Մկրտիչ ագայի Ծէր Մկրտչեանց (Ծէրենց), պ. Հայրապետի Աբասխանեանց և մահտեսի Յովհաննէսի Թերջանեանց։

ԺԵ. ի 1865 ամի հոկտեմ. յանձնարարութեամբ առաջնորդին Աթըպատականի Գէորգ Արքեպիսկոպոսի Վեհապետեանց, նուիրակութեան պաշտօնիս շրջագայելով Աթըպատականի քաղաքն՝ ի Խոյ, ի Սալմաստ, Յորմի, ի Մարագայ և յամենայն հայարնակ գիւղօրայս, մխիթարեցի գժողովուրդն քարոզութեամբ Աւետարանական բանից և շնորհաբաշխութեամբ սրբալոյս մեռոնի[1]։

ԺԶ. Ի 1866 ամի, գրութեամբ Սինոդի ի 15-ն յունվարի № 25, կարգեցայ ի վանահայրութիւն Տաթեւոյ վանից, ուր և կազմեցի զցանկ յատուկ անուանց ձեռագիրը պատմութեան Ստեփաննոս եպիսկոպոսի Օրբէլեանց, և զցուցակն ձեռագիրը մատենից այնը վանից և գրեցի զհամառօտ պատմութիւն վանահարց այնը վանից, սկսեալ ի Գրիգորէ Տաթեւացւոյ ցմեր ժամանակն։

ԺԷ. Ի 1867 ամի, գրութեամբ Սինոդի յ3-ն մարտի № 391, կարգեցայ ի պաշտօն յաջորդութեան մերս Նախիջեւան քաղաքի և գաւառի նորա 88 հայարնակ գիւղօրէից, յորս հաշուեն գաւառիկքն — Երնջակ, Գողթն, Վայոց-Ձոր և Ջահուկ։

ԺԸ. ի 1868 ամի, գրութեամբ Սինոդի ի 20 սեպտեմբերի № 1931, նախահանութեամբ Ս. Գէորգ Գ. կաթուղիկոսի, կարգեցայ վրդ թեմակալ Առաջնորդ Երեւանայ վիճակի, յորում են յաջորդութիւնքն Ալէքսանդրօպոլ, Նախիջեւան և Տաթեւ,

---

[1])Աթըպատականի յիշեալ քաղաքներուն մանրամասն նկարագրութիւնը արդէն պատրաստ է և Աստուծոյ յաջողութեամբ ժամանակին կը հրատարակուի ի լուր ազգայնոց։